ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ (1879-1882ԹԹ.) ԵՎ ՕՐԱԲԻ ՓԱՇԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԽԱՉԻԿ ԱՋԻՋՅԱՆ

Հոդվածը նվիրված է XIX դարի 2-րդ կեսին Եգիպտոսում ստեղծված ներքաղաքական իրավիճակի, մասնավորապես քաղաքական երկու հակադարձ ուժերի՝ եվրոպական տերությունների հպատակների և ազգայնականների գործունեության ու ռազմական գործողությունների ուսումնասիրությանը: Այս ժամանակաշրջանում Եգիպտոսի քաղաքական կյանքում բեկումնային դեր խաղաց Օրաբի փաշան, ով և հանդիսացավ եգիպտացիների շահերը պաշտպանող ընդդիմական ճակատի ղեկավարը: Օրաբի փաշայի գործունեությանը հիմնականում հակազդում էին անգլիական ուժերը, որոնք եգիպտական ուժերի հանդեպ ոչ միայն ունեին ռազմական առավելություն, այլ նաև հաջող դիվանագիտություն էին վարում ինչպես եվրոպական տերությունների, այնպես էլ Եգիպտոսի և Օսմանյան կայսրության նկատմամբ: Այնուամենայնիվ, Օրաբի փաշայի ձախողման համար որոշիչ գործոն դարձան ներքին հակասություններն ու սեփական անվճռականությունը:

Բանալի բառեր - Եգիպտոս, ներքաղաքական իրավիճակ, ընդդիմություն, Օրաբի փաշա, ազգային պայքար, անգլիական զորքեր:

XIX դարի 2-րդ կեսին Եգիպտոսում ստեղծված իրավիճակը հստակ տարանջատեց քաղաքական երկու հակադարձ ճակատ՝ մի կողմից եվրոպական նախարարների հպատակներ, ովքեր անձնական շահերը վեր էին դասում ազգային և պետական շահերից, մյուս կողմից՝ ազգանվեր գործիչներ, ովքեր ներկայացնում էին հասարակ եգիպտացիների՝ գյուղացիների ու զինվորականների շահերը և դեմ էին եվրոպական կամակատարություններին ու անարդարություններին իրենց իսկ երկրում: Եվրոպացիների տևական անօրինությունները եգիպտացիների հեղափոխությունը դարձրին նման մի քնած հրաբխի, որի ժայթքումն անխուսափելի էր, բայց և ուժգին:

Եգիպտոսը 1879-1882թթ. հայտնվեց քաղաքական խորը ճգնաժամի մեջ, որի պատճառը եգիպտական բանակի և նախարարների «եվրոպական

գրասենյակի»[1] միջև հակասությունն էր: Միջոցներ խնայելու նկատառումներով եվրոպացի նախարարներն աշխատանքից հեռացրին բանակի 2500 սպաներ, իսկ մնացած սպաների աշխատավարձը երկու անգամ կրճատեցին՝ նույնիսկ չմարելով նախկին պարտքերը: Տեղեկանալով իրենց արձակման մասին՝ բանակի սպաների մի խումբ՝ Լատիֆ բեյ Սալիմի գլխավորությամբ, ում աջակցում էին զինվորները և քաղաքացիները, 1879թ. փետրվարի 18-ին կանգնեցրեց վարչապետ Նուբար փաշայի և ֆինանսների նախարար Ռիվեր Ուիլսոնի կառքերը՝ նրանց վրա հսկողություն սահմանելով ֆինանսների նախարարության շենքում: «Գերիներին» հնարավոր եղավ ազատել միայն խեդիվ Իսմայիլի միջամտությամբ և նրան հավատարիմ զորքերի միջոցով: Այս միջադեպով Եգիպտոսի նոր պատմության մեջ առաջին անգամ ընդգծվեց բանակի քաղաքական ակտիվ դերը, և բացահայտվեց քաղաքական պայքարում վերջինի ներուժը: Այդ իրադարձություններից հետո վարկատու տերությունները սկսեցին զգուշանալ, որ խեդիվ Իսմայիլի աճող հեղինակությունը և ներքին քաղաքական անկայունությունը կարող են Եգիպտոսի իր պարտքերի մարումից հրաժարվելու պատճառ դառնալ: Այս մտավախությունները հաստատվեցին 1879թ.: Իսմայիլը մերժեց Ռիվեր Ուիլսոնի ֆինանսական նախագիծը՝ առաջ քաշելով հակաճգնաժամային միջոցառումների ֆինանսական ծրագրի սեփական նախագիծը, հասավ «եվրոպական գրասենյակի» հրաժարականին Նուբար փաշայի գլխավորությամբ (1879թ. ապրիլի 7), իսկ վարչապետի պաշտոնը ստանձնեց Իսմայիլի ավագ որդին՝ Թաուֆիկ փաշան[2]:

Ի պատասխան այդ քայլերի՝ վարկատու տերությունները, առաջին հերթին Անգլիան և Ֆրանսիան, սկսեցին Իսմայիլին սպառնալ, որ կտապալեն նրա իշխանությունը, եթե վերջինս չցուցաբերի առավել զիջողականություն

---

[1] Կառույցին Եգիպտոսի պաշտոնական կառավարումը փոխանցվել է 1878թ. օգոստոսի 28-ին. այն ստեղծվել էր Անգլիայի և Ֆրանսիայի նախաձեռնությամբ՝ լուծելու Եգիպտոսում ձևավորված քաղաքական և ֆինանսական ծանր իրավիճակը: Սակայն կառույցը, համալրված լինելով եվրոպացի կամ եվրոպամետ նախարարներով, իր իրական գործունեությամբ ծառայում էր խեդիվ Իսմայիլի գլխավորությամբ Եգիպտոսի սուվերենության պահպանմանն ուղղված պայքարի զսպմանը և եվրոպական տերությունների, մասնավորապես Անգլիայի և Ֆրանսիայի իշխանության ուժեղացմանը Եգիպտոսում: Եվրոպական գրասենյակի ստեղծմամբ հիմք դրվեց երկրի քաղաքական և վարչական իշխանության բաժանմանը, որի արդյունքում որոշումներ կայացնելու իրավունքը փոխանցվեց գործադիր մարմնին՝ նախարարների խորհրդին, որտեղ եվրոպական տերություններն ունեին իրենց ներկայացուցիչները:

[2] **Луцкий В.** Новая история арабских стран. Москва, 1965, стр. 177-179.

եվրոպական երկրների պահանջների նկատմամբ: Իսմայիլին իշխանությունից հեռացնելու Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական խաղին միացան նաև Գերմանիան և Ավստրիան, որոնք քննադատում էին խեդիվի գործողությունները: 1879թ. հունիսի 19-ին Անգլիան և Ֆրանսիան դիմեցին Իսմայիլին՝ պահանջելով նրանից հրաժարվել իշխանությունից՝ հօգուտ իր ավագ որդի Թաուֆիկի: Այդ պահանջին միացան նաև Ռուսաստանը և Իտալիան:

Իսմայիլն իր ճակատագրի որոշման համար դիմեց սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին, ով իր հերթին, զգուշանալով եվրոպական տերությունների հետ ընդհարումից, 1879թ. հունիսի 25-ին Իսմայիլին տեղեկացրեց նրա տապալման մասին և խեդիվ նշանակեց Իսմայիլի որդուն՝ 27-ամյա Թաուֆիկին[3]:

Նոր խեդիվ Թաուֆիկի առաջին քայլերը հաստատեցին, որ անգլիացիները ստացան հնազանդ, անկամք և հեշտ կառավարելի ղեկավար: Նոտաբլների պալատը[4] լուծարվեց (1879թ. հուլիս), վերականգնվեց երկակի անգլո-ֆրանսիական ֆինանսական հսկողության ռեժիմը, երկրի նոր վարչապետ նշանակվեց անգլիամետ Ռիյազ փաշան: Թաուֆիկի օրոք մտցվեցին նոր հարկեր, մշտապես չէր վճարվում զինվորների ու սպաների աշխատավարձը և այլն: Վերջապես 1880թ. հուլիսի 17-ին նոր խեդիվը համաձայնություն տվեց օրենք հրապարակել եգիպտական պետական պարտքի լուծարման վերաբերյալ, ըստ որի այդ պարտքը գնահատվում էր 98 միլիոն ֆրանկ[5]: Այս օրենքով վերջ էր դրվում եգիպտական ինքնիշխանությանը, և իրավական հիմքի վրա էր դրվում օտարերկրացիների գրեթե ցանկացած կամակատարություն: Միակ պատիժը երկրից արտաքսումն էր, սակայն նույնիսկ արտաքսվածները կարողանում էին հետ գալ և անպատիժ մնալ[6]:

Իսմայիլ փաշայի կառավարման ժամանակաշրջանից որպես ժառանգություն Թաուֆիկին մնաց հզոր ընդդիմական շարժում, որն առաջացավ իր

---

[3] عبد الرحمن الرافعي، عصر إسماعيل، الجزء الثانى، القاهرة، ١٩٨٢، ص. ٢٥١-٢٥٦.

[4] Պատգամավորների խորհրդարանական ժողովը (Մաջլիս շուրա ան-նուաբ), որը հաճախ անվանում են Պատգամավորների պալատ կամ Նոտաբլների պալատ, ստեղծվել է 1866թ. Իսմայիլ փաշայի կողմից. այն Եգիպտոսի պատմության մեջ առաջին խորհրդարանն էր: Պալատի ստեղծման նախադրյալը արտասահմանյան բանկերից ստացված վարկերի մարման հետ կապված ֆինանսական ծանր իրավիճակ ն էր: Այնուամենայնիվ, ֆինանսական ճգնաժամից դուրս գալու երկարաժամկետ և հիմնավորված լուծումների առաջադրման փոխարեն, պալատը երկրի ֆինանսական խնդիրների լուծումը տեսնում էր բնակչությունից լրացուցիչ հարկեր գանձելու մեջ:

[5] **Луцкий В**. Указ. соч., стр. 182, 183.

[6] **Marsot A. L. al-S**. A short history of modern Egypt. Cambridge, 1985, p. 70, 71.

հոր կառավարման վերջին տարիներին: Ռիյազ փաշայի անգլիամետ պահպանողական գրասենյակի իշխանության գալուց հետո (1879թ.) ընդդիմադիր շարժումը ձեռք բերեց եգիպտական ազգայնական բնույթ, որը սկզբունքորեն նոր երևույթ էր Եգիպտոսի ներքին քաղաքական կյանքում: Այդ շարժման 3 կարևորագույն բաղադրիչ խմբերը սերտորեն կապված էին երկրի եգիպտացման գործընթացի հետ: Առաջին խմբում խոշոր հողատերերն էին, գլխավորապես բնիկ եգիպտացիներ, ովքեր հարստացել էին Մուհամմադ Ալիի օրոք: Ընդդիմության երկրորդ խումբը երիտասարդ մտավորականներն էին, ովքեր ներկայացնում էին գյուղացիների շահերը: Երրորդ խումբը հիմնականում բանակի եգիպտացի սպայական կազմի կրտսեր և միջին շերտն էր, ով անհանգստանում էր բարձրագույն սպայական պաշտոնների մենաշնորհով, որոնք տրվում էին թուրք-չերքեզական միջավայրից դուրս եկած անձանց[7]:

Խեդիվ Իսմայիլի և Թաուֆիկի օրոք իրավիճակը փոխվեց, և բանակի թուրք-չերքեզական խմբավորումը կառավարիչների կողմից ստացավ լիակատար աջակցություն՝ ի վնաս եգիպտական սպայական կորպուսի շահերի: Թաուֆիկի օրոք ռազմական նախարար Օսման Ռիֆկին, շրջանցելով եգիպտացի սպաներին, ցուցադրաբար բարձրացրեց մի շարք սպաների աստիճանը, ովքեր թուրք-չերքեզական ազնվականության դասից էին: Այս ամենը բացահայտ բողոքի առիթ հանդիսացավ բնիկ եգիպտացիների նկատմամբ ռազմական ղեկավարության իրականացրած խտրական քաղաքականության դեմ: 1881թ. հունվարի 17-ին 4-րդ հետևազորային գնդի հրամանատար Օրաբի բեյը, 2 այլ եգիպտացի գնդապետների՝ Անդ ալ-Ալյահ և Ալի Ֆահմի ուղեկցությամբ, վարչապետ Ռիյազ փաշային անձամբ հանձնեց հանրագիր պաշտպանության նախարարի գործողությունների դեմ: Դրա պատասխանը եղավ նրանց ձերբակալումը պաշտպանության նախարարության շենքում, որտեղ նրանց հրավիրել էր հենց պաշտպանության նախարարը վերջինների բողոքի քննարկման պատրվակով: Սակայն նրանց ենթակայության տակ գտնվող զինվորներն ազատեցին իրենց հրամանատարներին՝ ուժով մտնելով նախարարության շենք, իսկ պաշտպանության նախարարին մի կերպ հաջողվեց փախչել: Պաշտպանության նախարարի պաշտոնում նշանակվեց Մահմուդ Սամի ալ-Բարուդին (1839-1904թթ.)[8]:

Այս իրադարձությունները գնդապետ Ահմադ Օրաբիին (1839-1911թթ.)

---

[7] Նույն տեղում, էջ 71, 72:

[8] **Луцкий В**. Указ. соч., стр. 184, 185.

դարձրին հայրենասիրական շարժման առաջնորդ, ում շուրջը համախմբվեցին ընդդիմության հիմնական ուժերը: Օրաբին դուրս էր եկել գյուղական հասարակությունից. նրա հայրը գյուղական շեյխ էր: Բանակից առաջ Օրաբին որոշ ժամանակ սովորել էր ալ-Ազհարի համալսարանում և խորապես ուսումնասիրել արտասահմանյան հեղափոխական փորձը[9]: 1876թ. եթովպիական անհաջող պատերազմից հետո նա բանակում գլխավորեց եգիպտացի սպաների գաղտնի կազմակերպությունը, որի անդամներն իրենց կոչում էին «վաթանիյուն»՝ հայրենասերներ: Որոշ հեղինակներ արտահայտում են այն կարծիքը, որ սկզբնական շրջանում միության գլուխ կանգնած էր Ալի առ-Ռուբին, իսկ Օրաբին այն գլխավորեց ավելի ուշ[10]: Ըստ երևույթին, սկզբնական շրջանում կազմակերպության անդամների հիմնական պահանջն էր բանակում ազգային իրավահավասարությունը և ծառայության պայմանների բարելավումը: Ավելի ուշ այդ խնդիրները լրացվեցին համազգային և հակաարտասահմանյան պահանջներով[11]: Հենց Օրաբիի շրջապատում ծնվեց հայտնի կարգախոսը՝ «Եգիպտոսը եգիպտացիների համար»: 1881թ. Օրաբին և իր համախոհները կազմավորեցին Ազգային կուսակցությունը կամ Հայրենիքի կուսակցությունը (Հիզբ ալ-վաթանի)[12]:

Պետության և բանակի միջև հակամարտության նոր փուլը սկսվեց 1881թ. աշնանը: 1881թ. սեպտեմբերի 9-ին պաշտպանության նախարար Մահմուդ Սամի ալ-Բարուդիի պաշտոնից հեռացնելուն և ազգայնական-վաթանիստների ազդեցության տակ գտնվող անվստահելի զինվորական միավորների վերացմանն ուղղված քայլերին ի պատասխան՝ 4 հազար զինվորներ, որոնց գլուխ կանգնած էին 30 սպաներ, Օրաբի բեյի հրամանատարությամբ շարվեցին Կահիրեում խեդիվի նստավայրի Աբդինյան պալատի դիմաց և այն ռմբակոծելու սպառնալիքով պահանջեցին վարչապետ Ռիյազ փաշայի հրաժարականն ու Նոտաբլների պալատի գումարումը: Թաուֆիկ փաշան բավարարեց վերջինների բոլոր պահանջները. անցկացվեցին Նոտաբլների պալատի երկրորդ գումարման ընտրությունները, և 1881թ. դեկտեմբերի 23-ին կրկին

---

[9] **Tignor R.** Modernization and British colonial rule in Egypt, 1882-1914. Princeton, New Jersey, 1966, p. 15, 16.

[10] **Cole J.** Colonialism and revolution in the Middle East: social and cultural origins of Egypt's Urabi Movement. Princeton, New Jersey, 1993, p. 155.

[11] **Кошелев В.** Египет: уроки истории. Борьба против колониального господства и контрреволюции (1879-1981). Минск, 1984, стр. 26.

[12] عبد الرحمن الرافعي، الثورة العرابية و الاحتلال الإنجليزي، القاهرة، ١٩٨٤، ص. ٨٢-٨٣.

ընտրված պատգամավորները գումարեցին իրենց առաջին նիստը: Բանակի վճռական գործողությունների շնորհիվ երկրում իշխանության եկավ քաղաքացիական ընդդիմության չափավոր թևը՝ Շերիֆ փաշայի գլխավորությամբ[13]:

Մահմուդ Սամի ալ-Բարուդին զսպողի դեր էր խաղում, ով հանդես էր գալիս Օրաբիի և նրա կողմնակիցների մտադրությունների դեմ. վերջինները, պահանջելով եվրոպացիների ամբողջական վտարումը երկրից, ցանկանում էին ուժ կիրառել և ցրել օպորտունիստական կառավարությունը: Օրաբիստների և Շերիֆի կառավարության միջև ուժեղ վեճ սկսվեց 1882թ. հունվարի 2-ին, որը կապված էր կառավարության կողմից առաջարկված հիմնական օրենքի (ալ-լահիյա ալ-ասասիյա) և ընտրությունների մասին օրենքի հետ, որոնք ստացան Անգլիայի և Ֆրանսիայի վերահսկիչների հավանությունը: Այդ օրենքները սահմանափակում էին Նոտաբլների պալատի իրավունքները, քանի որ ընդունվել էին առանց վերջինի համաձայնության: Այդ խնդիրը լուծվեց իշխանությունից վարչապետ Շերիֆի հեռացումով և այդ պաշտոնում նախկին պաշտպանության նախարար Մահմուդ Սամի ալ-Բարուդիի նշանակումով: Պաշտպանության նախարարի պաշտոնը զբաղեցրեց Ահմադ Օրաբի բեյը: Փաստացի իշխանությունն անցավ բանակի ձեռքը, որը 1881թ. սկսած վճռորոշ դեր խաղաց Եգիպտոսի քաղաքական կյանքում[14]:

Ազգային կուսակցության քաղաքացիական թևի առաջնորդները, ովքեր աջակցում էին Շերիֆ փաշային, հեռացան քաղաքական ակտիվ գործողություններից: 1882թ. փետրվարից սկսած՝ հակաարտասահմանյան պայքարն առաջնորդող դերն ամբողջությամբ անցավ բանակին: 1882թ. փետրվարի 7-ին նոր կառավարությունն իշխանության գալուց անմիջապես հետո հրապարակեց Օրգանական օրենք, որը մշակվել էր Նոտաբլների պալատի կողմից. վերջինը երաշխավորում էր պալատի իրավունքները և փաստացի դադարեցնում երկակի հսկողությունը: Ֆրանսիական վերահսկիչ դե Բլիները, ի նշան բողոքի, ցուցադրաբար լքեց Եգիպտոսը: Մահմուդ Սամի ալ-Բարուդիի և Օրաբիի կառավարությունը շարունակեց իր գործունեությունը և սկսեց նոր՝ ավելի ժողովրդավարական ընտրական օրենքի մշակումը, ինչպես նաև պատրաստեց առաջադիմական օրենքի մի շարք նախագծեր: Նոր կառավարությունը սկսեց եվրոպացի պետական պաշտոնյաների հեռացումը և նրանց փոխարինումը

[13] Նույն տեղում, էջ 119-128, 162-170:
[14] **Tignor R**. Ibidem, p. 18.

բնիկ եգիպտացիներով[15]:

1882թ. հունիսին խեդիվ Թաուֆիկի նախաձեռնությամբ Ալեքսանդրիայում մուսուլմանների կողմից տեղի ունեցան հակաեվրոպական և հակաքրիստոնեական ելույթներ, որոնք զսպվեցին Օրաբի փաշայի կողմից: Ալեքսանդրիայի իրադարձություններից հետո երկրի ներսում ուժերի սահմանագծումն ավելի հստակ տեսք ստացավ: Հունիսի 13-ին խեդիվ Թաուֆիկն իր կողմնակիցների հետ միասին ապստամբած Կահիրեից անգլիական նավատորմի պաշտպանությամբ փախավ Ալեքսանդրիա: 1882թ. հունիսի 20-ին այստեղ ձևավորվեց խեդիվին հնազանդ կառավարություն՝ Ռահիբ փաշայի գլխավորությամբ: Կահիրեում, որտեղ իշխանությունը պատկանում էր վաթանիստներին և Օրաբիին, հազարավոր արտասահմանցիներ և տեղացի կալվածատերեր փախչում էին Եգիպտոսից, ինչին ի պատասխան՝ Օրաբին հրաման արձակեց բռնագրավել եգիպտացի վտարանդիների սեփականությունը[16]:

1882թ. ամռանը Եգիպտոսը հայտնվեց անգլիական բռնազավթման իրական վտանգի տակ, ինչը բացառելու նպատակով ֆրանսիական կառավարությունը Ֆրեյսինեի գլխավորությամբ եգիպտական հարցով հրավիրեց միջազգային համաժողով: Եգիպտական հարցով համաժողովը բացվեց 1882թ. հունիսի 23-ին Կոստանդնուպոլսում, որին մասնակցեցին Անգլիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Ավստրիայի, Գերմանիայի և Իտալիայի ներկայացուցիչները: Որոշում ընդունվեց այն մասին, որ «քանի դեռ համաժողովը շարունակվում է, տերությունները պետք է խուսափեն Եգիպտոսում ցանկացած միայնակ գործողություններից»[17]: Այդ առաջարկին Անգլիայի ներկայացուցիչ լորդ Դաֆֆերինը պատասխանեց. «Եթե չլինի արտակարգ իրավիճակ»: Որպես «արտակարգ իրավիճակ» օգտագործվեց վեճը կապված Ալեքսանդրիայի ափերի ամրացման հետ, որոնք գրեթե ավերված էին և բրիտանական նավատորմի դեմ համարվում էին վատ պաշտպանական միջոց: Սակայն հուլիսին Օրաբի փաշայի նախաձեռնությամբ ամրացման աշխատանքները վերսկսվեցին: Անգլիան, կրկնակի մերժում ստանալով Ալեքսանդրիայի կայազորի պետից դադարեցնել ամրաշինական աշխատանքները, 1882թ. հուլիսի 11-ին իր նավերով ռմբակոծեց Ալեքսանդրիան, ինչի արդյունքում քաղաքն ավերվեց[18]: 1882թ. հուլիսի 12-ին Օրաբին իր զորքերին հրամայեց հեռանալ այրվող քաղաքից:

---

[15] **Луцкий В**. Указ. соч., стр. 191.
[16] Նույն տեղում, էջ 194, 195:
[17] **Ротштейн Ф.** Захват и закабаление Египта. Москва, 1959, стр. 174-179.
[18] Նույն տեղում, էջ 183:

Նրանց հետ միասին քաղաքը լքեցին հազարավոր բնակիչներ: Չորս օր անց անգլիական դեսանտը զբաղեցրեց դատարկված քաղաքը[19]:

Ալեքսանդրիայի ռմբակոծումը սկիզբ դրեց 1882թ. անգլո-եգիպտական պատերազմին: Անգլիական էքսպեդիցիոն կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ Ուոլսլին, խեդիվը և նրա կողմնակիցներն անցան անգլիացիների կողմը ու մնացին Ալեքսանդրիայում: Օրաբին, մերժելով դադարեցնել անգլիացիների դեմ ռազմական գործողությունները, հեռացվեց պաշտպանության նախարարի պաշտոնից և շատ արագ սկսեց պաշտպանության կազմակերպումը:

Ալեքսանդրիայում մնացած Ռահիբ փաշայի կառավարության փոխարեն, ում վաթանիստները հայտարարեցին դավաճան, Կահիրեում ստեղծվեցին հեղափոխական իշխանության նոր մարմիններ՝ Արտակարգ խորհուրդը և Ռազմական խորհուրդը: Արտակարգ խորհրդին վաթանիստների առաջնորդների հետ միասին մասնակցում էին ուլեմներ, շեյխեր և նոտաբլներ, ովքեր մնացել էին Կահիրեում:

Անգլիացիների կողմից Եգիպտոսի բռնազավթումը խոչընդոտելու համար Կոստանդնուպոլսի համաժողովին մասնակցող տերությունները որոշեցին կազմակերպել թուրքական բռնազավթումը, ինչը կասեցվեց անգլիական ճկուն դիվանագիտության շնորհիվ[20]: Տերությունները հասկանալով, որ Կոստանդնուպոլսի համաժողովն անզոր է խանգարելու անգլիական ներխուժումը Եգիպտոս, և հետևաբար՝ աննպատակ է, 1882թ. օգոստոսի 14-ին փակեցին այն[21]:

Այսպիսով, անգլիացիները կարող էին հարձակվել Եգիպտոսի վրա կամ հյուսիսից՝ Միջերկրական ծովի կողմից, կամ արևելքից՝ Սուեզի ջրանցքի կողմից: Հյուսիսից երկիր մտնելու ճանապարհը դժվարացնում էին անանցանելի ճահիճները: Այդ ճահիճների միջակայքում Օրաբին ստեղծեց ամուր պաշտպանական դիրքեր: Եգիպտոսի արևելյան սահմանի պաշտպանության գործը խիստ կարևոր էր, սակայն շատ բարդ, քանի որ այս հարցի լուծումը ենթադրում էր ռազմական և տնտեսական շահերի բախում: Ռազմական առումով շահավետ այն տարբերակը, որը ենթադրում էր Սուեզի ջրանցքի փլուզում և քաղցրահամ ջրի ջրատարի փակում, զրկում էր Ֆրանսիային ջրատարից ստացվող եկամուտներից, ինչին դեմ հանդես եկավ ջրանցքի կառուցող Ֆեր-

---

[19] **Луцкий В**. Указ соч., стр. 195, 196.
[20] Նույն տեղում, էջ 197, 198:
[21] **Ротштейн Ф**. Указ. соч., стр. 193.

դինանդ դե Լեսսեպսը: Լեսսեպսը, Օրաբի փաշային խոստանալով թույլ չտալ անգլիական զորքերի իջեցումը ջրանցքի տարածք, համոզեց վերջինին չկասեցնել ջրանցքի աշխատանքը, ինչը դարձավ Օրաբիի կողմից թույլ տրված կոպիտ ռազմական և քաղաքական սխալ:

Անգլիացիներն առանց կռվի օգոստոսի 2-ին զբաղեցրին Սուեզը: Լեսսեպսի հավաստիացումներին հակառակ՝ օգոստոսի 20-ին անգլիացիները դեսանտ իջեցրին Պորտ Սաիդում և Իսմաիլիայում: Նեղոսի հովիտը արևելքից մնաց անպաշտպան, քանի որ այն գտնվում էր եգիպտական բանակի վատագույն զորամիավորումների ներքո: 1882թ. սեպտեմբերի 13-ին անգլիացիները գիշերը հանկարծակի հարձակվեցին Թել ալ-Քաբիրի մոտ գտնվող եգիպտական դիրքերի վրա, և մարտն ավարտվեց եգիպտացիների պարտությամբ. Օրաբին անմիջապես մեկնեց Կահիրե[22]: Օրաբի փաշան, հաշվի առնելով հյուսիսում անվնաս մնացած եգիպտական լավագույն միավորումների ներուժը և այն հանգամանքը, որ Ալեքսանդրիայի և Սուեզի տարածքից բացի երկրի մնացած մասը գտնվում է եգիպտացիների ձեռքում, Արտակարգ խորհրդի նիստում պնդում էր շարունակել պատերազմը: Սակայն Արտակարգ խորհրդի կալվածատերերը քվեարկեցին կապիտուլյացիայի օգտին, և Օրաբին թույլ տվեց երկրորդ սխալը՝ ենթարկվելով Արտակարգ խորհրդի որոշմանը: Այսպիսով, եգիպտական բանակը պարտվեց ոչ թե անգլիական զենքից, այլ բեդվինական շեյխերի և Կահիրեի նոտաբլների դավաճանության, ինչպես նաև Օրաբի փաշայի անվճռականության հետևանքով, ով կարևոր պահին չհամարձակվեց իրեն օժտել բռնատիրական իրավասություններով և չցրեց Արտակարգ խորհուրդը, որն անցել էր թշնամու կողմը[23]:

Սեպտեմբերի 14-ի երեկոյան անգլիական հեծելազորը մոտեցավ Կահիրեին, և Օրաբին հանձնվեց անգլիացիներին: 1882թ. սեպտեմբերի 24-ին մայրաքաղաք ժամանեց խեդիվ Թաուֆիկն իր «նախարարների» հետ միասին: Զավթիչները զինաթափեցին եգիպտական բանակը, իսկ եգիպտական ազգի վրա դրվեց ռազմատուգանք՝ 9 միլիոն ֆունտ սթեռլինգի չափով: 1882թ. դեկտեմբերին Օրաբին և նրա աջակիցները դատապարտվեցին մահվան, սակայն հասկանալով, որ Օրաբիի մահապատիժը կարող էր նոր ապստամբության առիթ դառնալ՝ անգլիական կողմն այն փոխեց ցմահ աքսորով դեպի Ցեյլոն[24]:

---

[22] Նույն տեղում, էջ 195:
[23] **Луцкий В**. Указ. соч., стр. 198, 199.
[24] Նույն տեղում, էջ 199, 200:

Այսպիսով, ամփոփելով վերևում ներկայացված պատմական իրադարձությունները և վերլուծությունները՝ կարող ենք եզրահանգել, որ Օրաբի փաշայի ղեկավարած շարժումը, սկզբնական շրջանում արտացոլելով ընդամենը բանակային ընդդիմության հակաչերքեզական պահանջները, եվրոպական ուժերի կողմից մերժում ստանալու արդյունքում ի վերջո ձեռք բերեց եվրոպական գերիշխանությանը հակազդող ուղղվածություն: Իր շուրջը համախմբելով եվրոպական կամայականություններից հոգնած և Եգիպտոսի ազգային շահերի ու ինքնուրույնության համար անհանգիստ համախոհների՝ Օրաբի փաշան կարողացավ կառուցել ուժեղ ընդդիմություն՝ պատրաստ պայքարելու երկրի դե յուրե և դե ֆակտո անկախացման համար: Շարժումը բացառիկ էր նաև այն հանգամանքով, որ կարողացավ համախմբել հասարակության լայն շերտեր՝ ընդգրկելով հասարակ գյուղացուց մինչև ռազմական գործիչ ու մտավորական, ինչը շարժմանը հաղորդեց համազգային ընթացք: Օրաբի փաշան թեև կարողացավ ստեղծել լայնածավալ ազգային շարժում և տևական ժամանակ լուրջ ընդդիմություն կազմել օտարերկրյա զավթիչների դեմ, այնուամենայնիվ նա չկարողացավ կարևոր պահերին կատարել վճռորոշ, երբեմն նաև խիստ ռիսկային քայլեր՝ վախենալով կորցնել կարևոր գործընկերներ. ի վերջո նա ձախողեց մի ամբողջ հեղափոխություն: Ֆրանսիան և Ռուսաստանը, որոնք դեմ էին հանդես գալիս Եգիպտոսի անգլիական բռնազավթմանը, խանգարեցին Անգլիային Եգիպտոսը հռչակել իր գաղութը: Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը 32 տարի Անգլիան չկարողացավ հասնել Եգիպտոսի նկատմամբ իր իրավունքների միջազգային ճանաչմանը, որն անգլիացիներին չխանգարեց Եգիպտոսում հաստատել գաղութային համակարգ և փաստացի երկիրն ընդգրկել Բրիտանական կայսրության մեջ: Եգիպտոսում անգլիական ռազմական ներկայությունն ավարտվեց միայն 1954թ.՝ խեդիվ Թաուֆիկի մահից (1892թ.) շուրջ 62 տարի անց: Այսպիսով, խեդիվ Թաուֆիկի մտադրությունները՝ Եգիպտոսի ազգային ինքնուրույնության «վաճառքի» շնորհիվ հետագայում ձեռք բերել միանձնյա կառավարման հնարավորություն, լիովին տապալվեցին:

ВНУТРИПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ЕГИПТЕ (1879-1882) И ЗНАЧЕНИЕ ВОССТАНИЯ ОРАБИ ПАШИ И ПРИЧИНЫ ЕГО ПОРАЖЕНИЯ

ХАЧИК АЗИЗЯН

Эта статья посвящена внутриполитической ситуации в Египте во второй половине XIX века, в частности изучению деятельности и военных действий двух политических оппонентов: про-европейских сил и националистов Египта. В этот период Ораби паша сыграл решающую роль в политической жизни Египта и стал лидером оппозиционного фронта, который выступал за национальные интересы. Британские войска, которые в основном выступали против деятельности Ораби паши, имели не только военное преимущество над египетскими силами, но и вели успешную дипломатию как с европейскими державами, так и с Египтом и Османской империей. Тем не менее, именно внутренние противоречия и собственная нерешительность стали определяющим фактором поражения Ораби паши.

Ключевые слова – Египет, внутриполитическая ситуация, оппозиция, Ораби паша, национальная борьба, британские войска.

THE INTERNAL POLITICAL SITUATION IN EGYPT (1879-1882) AND THE ESSENCE OF THE RISE OF ORABI PASHA AND THE CAUSES OF HIS DEFEAT

KHACHIK AZIZYAN

This article is concerned with the internal political situation in Egypt in the second half of the XIX century, particularly with the study of the activities and military actions of its two opposing political powers— the subjects of the European countries and the nationalists. Then Orabi pasha, played a decisive role in the political life of Egypt. He commanded the respect and support of not only the simple people but also a large portion of the Egyptian army as well. He became the leader of the opposional front and represented the voice of the people of Egypt. The British powers, which had military advantages over the Egyptian forces were opposing the activities of Orabi pasha. They also conducted successful diplomacy with other countries of Europ, with the Egyption government and the Ottoman Empire as well. Nevertheless, the internal contradictory issues within Egpyt and Orabi pasha's own irresolution became the determining factors of his defeat.

Key words – Egypt, internal political situation, opposition, Orabi pasha, national struggle, British troops.